ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀՍԿԻՉ -ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-168 օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ^3» կետ.

«դ^3. 2018 թվականի հունվարի 1-ից պարտադիր է հետևյալ գործունեության ոլորտների համար՝

- առևտրի իրականացման վայրերում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում) 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող կրպակներից, վրաններից և ապրանքների ցուցադրումն ու պահպանումն ապահովող կահավորված այլ վաճառատեղերից, ինչպես նաև առևտրի իրականացման վայրերի մշտական շինություններում վաճառասեղաններից ապրանքների (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի) վաճառք.

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում գտնվող 10 քառակուսի մետրը չգերազանցող ընդհանուր մակերես ունեցող կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեություն.

- մեկ աշխատատեղով վարսավիրական ծառայությունների մատուցում.

- մեկ աշխատատեղով հագուստի, գլխարկների, մանածագործական և մորթե արտադրատեսակների արտադրություն և նորոգում.

- մեկ աշխատատեղով կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում.

- մեկ աշխատատեղով ավտոտեխսպասարկման կայանի (կետի) գործունեություն.

- մեկ աշխատատեղով ներկարարական, ատաղձագործական և խառատի գործունեություն.

- անասնաբուժական ծառայությունների մատուցում.».

2) «ե» կետում ««ա»-«դ^{1}» կետերում» բառերը փոխարինել ««ա»-«դ^{1}» և «դ^{3}» կետերում» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**